Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-26/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

18 մայիս 2026թ.
Ժամը՝ 17:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Լ. Մինասյան
Հանձնաժողովի գնահատող անդամ՝	Մ. Մելիքսեթյան
Հանձնաժողովի բացող անդամ՝	Լ. Ղազարյան
	Վ. Դրմեյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Ադիլխանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Լ. Մինասյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԳՀԾՁԲ-26/13** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0

2. ՀՀՀ-ԳՀԾՁԲ-26/13 ծածկագրով հայտերի բացման մասին
(Լ. Մինասյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5, Հեռ.՝ +374 60 540 000, info@silinsurance.am

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Լ. Մինասյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում Հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են, բացառությամբ Հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետի աղյուսակի 1-ին սյունակով պահանջվող փաստաթղթերի (պայմանագրերի, հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի պատճենները) և 2-րդ սյունակով պահանջվող փաստաթղթերի (ապահովագրության պայմանագրի նախագիծը):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :

4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Լ. Մինասյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանության մասին ծանուցել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությանը

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 20.05.2026թ. ժամը 17:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**

(Լ. Մինասյան)

ՀՀՀ-ԳՀԾՁԲ-26/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2026 թվականի մայիսի 20-ին ժամը 17:00-ին ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ՝	Լ. Մինասյան
Հանձնաժողովի գնահատող անդամ՝	Մ. Մելիքսեթյան
Հանձնաժողովի բացող անդամ՝	Լ. Ղազարյան
	Վ. Դրմեյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Ադիլխանյան